

# Մ Ա Տ Թ Է Ո Ս Դ Ա Ր Բ Ի Ն Ե Ա Ն

Ռուսահայ նորագոյն գրականութեան մէջ ուրոյն եւ առանձնաշատուկ տեղ է գրաւում Մ. Գարբինեանը: Մընել է նա 1889 թիւն Շամշադին գաւառակի թովուզ (Տաուշ) գիւղում: Հայրը, չքաւոր գիւղացի արհեստաւոր (գարբին), ուսման չափազանց սէր ունեցող, ամէն ջանք գործ է գնում որ որդին ուսում ստանայ թիֆլիսում:

1900 թիւն Գարբինեանը մտնում է Ներսիսեան դպրոցը, որի լիակատար դասընթացն աւարտում է 1908 թիւն: Բազմամեամ ընտանիքի հոգւր հնարաւորութիւն չի տալիս բարձրագոյն ուսում ստանալու եւ Գարբինեանն ստիպւած է լինում պարապելու ուսուցչութեամբ մինչեւ 1915 թիւր: 1918 թիւն նրան յաջողւում է մշտնել Անդրկովկասեան Համալսարանի պատմա-լեզուաբանական ֆակուլտետը, բայց չի աւարտում՝ ֆակուլտետը փակելու պատճառով:

Գարբինեանն իր գրական փորձերն սկսել է դեռ եւս դպրոցական հասակից: 1907 թիւն թիֆլիսում հրատարակող Խարաբալա երգիծաբանական շաբաթաթերթում տպագրւում են նրա մի քանի ֆելիետոն-հումորեսկները, իսկ 1908 թիւն թիֆլիսում լոյս տեսնող մանկական Հասկեւ ամսագրում տպագրւում է նրա առաջին մանկական պատմուածքը — «Արամի տընակն ու Հայկանուշի տիկնիկը»: Գարբինեանը Խարաբալայում գրել է «Զնգանեան» կեղծանունով, իսկ Հասկեւում «Մատթէոս» ստորագրութեամբ: Այս առաջին փորձերը խրախուսում են պատանի Գարբինեանին, որ նա աւելի ուշք գարձնի իր վրայ, և Զօրէն պարապի գրականութեամբ: Բա-

ւական զգալի գաղարից յետոյ, Գարբինեանը 1916 թիւց հանդէս է գալիս թիֆլիսում հրատարակող Պայտը թերթում, որպէս երգիծական-ֆելիետոնիստ «Աւան» ծածկանւան տակ, ապա գրում է մի շարք առակներ, իսկ 1923 թւականից սկսած գրում է, գրեթէ բացառապէս, պատմուածքներ գիւղական կեանքից: Գարբինեանը մինչեւ այժմ էլ շարունակում է այդ ուղղութեամբ, միաժամանակ գրելով մանկական պատմուածքներ, հէքեաթներ, լեզեւիչներ, առակներ ու ստանաւորներ: Գարբինեանը գրում է նաեւ գրամատիքական գրաւածքներ: Նրա առաջին պիէսը — Մինիստրներ, ուր ծաղրւում են Անդրկովկասեան Հանրապետութիւնների նախկին «տէրերը» — մենշեւիկները, գաշնակցականները եւ մուսավաթիստները, — ամէն տարի մի քանի անգամ բեմագրւում է դպրոցներում, մանկական թատրոններում եւ ակումբներում եւ կարելի է ասել՝ բեմից չի իջնում: Տպագրւում է նրա մի ուրիշ պիէսը — Կոմսոնոյ, եւ ունի ձեռագիր պիէսներ — երեք հատ:

Դժբախտաբար Գարբինեանի պատմուածքների ժողովածուն առանձին գրքով դեռ եւս հրատարակւած չէ (չհաշուելով մանր բրոշիւրները): Այդ պատմուածքները, որոնք արտացոլացնում են նախ-հոկտեմբերեան, ինչպէս եւ յետ-հոկտեմբերեան հայ գիւղը, տակաւին մնում են մեր պարբերականներում ցրւած: Պէտք է նկատել, որ այդ պատմուածքներից շատերը մտել են դասագրքերի մէջ, ինչպէս Վլասը, Ապեց Աւագը, Դեպի Կարմիր Բանակ, եւ այլն, որոնք մեր մատաղ սերնդի ընթերցանութեան սիրելի նիւթերից են:

Այստեղ հնարաւոր չէ մ'ի առ մ'ի կանգ առնել եւ վերլուծել այդ պատմեաճքները: Կ'ասենք մ'ի առ յն, որ նրանց ընդհանուր բընոյթը գիւղի վերելքին ու նրա սոցիալիստական շինարարութեանն է վերաբերում: Յուսանք, որ մ'օտ սպազայում հրատարակչական մարմինները լոյս կ'ընծայեն այդ ժողովածուն, որ մ'ի պատկանելի ծաւալ ունեցող գիրք է լինելու:

Աւելորդ չենք համարում յիշելու, որ Դարբինեանի պատմեաճքերից մ'ի քանիսը թարգմանեաճ են օտար լեզուներով, ինչպէս — Վլասար, Նագանի Դասր եւ Փարսագանր (ուսերէն), Թեւալիներ, Փարսագանր և Դեպի Կարմիր Բանակ (վրացերէն), Սարմասեցի Վորոնցովը (թուրքերէն):

Դարբինեանի աշխատութիւններից անշուշտ ամենախոշորն ու արժէքաւորը նրա Կիկոս վիպակն է, որի երկու մասը լոյս տեսաւ Նոբ ամսագրում, իսկ ամբողջը լոյս տեսաւ Խորհրդային Հայաստանի Պետհրատի հրատարակութեամբ, առանձին գրքով: Այս գրեաճքում հեղինակը տալիս է Հայաստանի գիւղի մ'ինչխորհրդայնացման, քաղաքացիական կռիւների եւ խորհրդայնացման առաջին տարիների պատկերը: Նոյն Պետհրատը շուտով տպագրելու է նաեւ Դարբինեանի մէկ ուրիշ վիպակը — Ջաղացգան Անունը, որի նիւթը վերցեաճ է ընդ-յատակեայ աշխատանքների կեանքից:

Դարբինեանի պատմեաճքերի բնորոշ և առանձնայատուկ կողմն է՝ պարզ լեզուն, համեմաճ ժողովրդական դարճեաճքներով, առաճներով ու սրախօսութիւններով, որով հարուստ է Դարբինեանի շտեմարանը, ինչպէս վկայում են գրական քննադասանքը:

Մինչեւ այժմ, չհաշեաճ ֆելիեոմները, առակները, մանկական պատմեաճքները, հեքեաթները, դասնաւորներն ու պիէսները, լոյս են տեսել Դարբինեանի հեաեւեալ պատմեաճք-վիպակները. — Վլասար, Կամեգր, Բորոր, Դեպի Կարմիր Բանակ, Ընկեր հողաւոր, Այոյի Ջուռնէն, Փարսագանր, Ակսիվն ու Հեյգար, Սպեց Աւագր, Պապր, Ինվայիգր, Սարմասեցի Վորոնցովը, Սոյոր, Դրասի, Կեսիան կորեկը, Ակգունեային հարց, Թեւալիներ, Տեր Փոստանր, Սուրբ Սարգսի Ղուլը, Դեկիկնց

թե Դիկիկնց, Վասալայ Պրակասի, Պրաւեննի, Սեմիչկա, Կապիսալը, Սեպարասորը, Նագանի Դասր, Կոնասր, եւ այլն:

Այս աշխատութիւններից գաա, Դարբինեանը թարգմանել է ուսու եւ օտար հեղինակներից պատմեաճքներ ու վէպիկներ — քանից աւելի, և երկու պիէս:

Այս բոլէիս Խորհրդային Հայաստանի Պետհրատը տպագրութեան է յանճնել Մ.



ՄԱՏԹԷՈՍ ԴԱՐԲԻՆԵԱՆ

Դարբինեանի հեաեւեալ գրքերը. — Ջարգնող Դիւղը (պատմեաճքերի ժողովածու) և Ջաղացգան Անունը (վիպակ): Առաջին գրքի մէջ ամփոփեաճ են հեղինակի մ'ինչ եւ յեա-հոկտեմբերեան հայ գիւղի կեանքից վերցրեաճ կենցաղային պատկերներ: Իսկ երկրորդ գրքոյից պատկերացնում է Հայ գիւղը յեղափոխական ընդ-յատակեայ աշխատանքների ժամանակ: Սա Կիկոսի հախորդող շրջանն է:

Դարբինեանը ներկայումս տպրում է մ'իմ'ի առ յն գրական աշխատանքով, ոչ մ'ի տեղ չի ճառայում եւ չունի որ եւ է կողմնակի եկամուս: Հիմնադիր անդամներից է Վրաստանի պրոլետարիատների հայկական սեկցիայի, որի մէջ ակտիվ կերպով աշխատում է եւ այժմ:

Թիֆլիս

ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ